ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ո՞Ր ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐՆ ԵՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՏՐՎՈՒՄ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻՆ



COVID-19-ի դեմ պատվաստանյութ

6 ամսական և ավելի բարձր տարիքի բոլոր անձինք պետք է ընդունեն COVID-19-ի դեմ թարմացված բաղադրությունով ամենավերջին պատվաստանյութի առնվազն 1 դեղաչափ, որպեսզի պաշտպանվեն շրջանառվող ենթատեսակներից և ծանր հիվանդանալուց: Պաշտպանված լինելն օգնում է դեռահասներին խուսափել դասերը, սպորտային մարզումները և այլ կարևոր գործողությունները բաց թողնելուց:

Գրիպի (ինֆլուենցա) դեմ պատվաստանյութ

Գրիպի դեմ ամենամյա պատվաստանյութը խորհուրդ է տրվում 6 ամսական և ավելի բարձր տարիքի բոլոր անձանց: Գրիպի դեմ պատվաստվելու լավագույն ժամանակը աշունն է: Գրիպը վարակիչ շնչառական հիվանդություն է, որն առաջանում է ինֆլուենցայի վիրուսից և ամեն աշուն ու ձմեռ առաջացնում է ծանր հիվանություն՝ հանգեցնելով հոսպիտալացումների և մահվան: Նույնիսկ առողջ դեռահասները կարող են հիվանդանալ գրիպով: Քրոնիկական խնդիրներ, օրինակ՝ ասթմա կամ շաքարային դիաբետ ունեցող դեռահասների համար գրիպից առաջացած բարդությունների պատճառով հիվանդանոցում հայտնվելու վտանգն ավելի մեծ է:

- ☐ ԹԱՐՄԱՑՎԱԾ COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹ
- ☐ ԳՐԻՊԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹ
- ☐ ՄՊՎ (HPV) ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՇԱՐՔ
- ☐ ԱՓԴԿ (TDAP) ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹ
- ☐ ՄԵՆԻՆԳՈԿՈԿԱՅԻՆ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹ

ՄՊՎ-ի (HPV (մարդու պապիլոմավիրուս)) դեմ պատվաստանյութերի շարք

ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութն օգնում է կանխարգելել արգանդի վզիկի, բերանի խոռոչի, հետանցքի, հեշտոցի և առնանդամի քաղցկեղները, որոնք առաջանում են ՄՊՎ-ից: ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութերի շարքը խորհուրդ է տրվում 11-12 տարեկան բոլոր դեռահասներին, սակայն առաջին դեղաչափը կարող է տրվել արդեն 9 տարեկանում, որպեսզի մինչև սեռական առաջին հարաբերությունը երկար ժամանակ տրամադրվի շարքն ավարտելու համար:

ԱՓԴԿ (Tdap (փայտացում, դիֆթերիա, կապույտ հազ)) պատվաստանյութ

Դեռահասները պետք է ստանան ԱՓԴԿ-ի (Tdap) մեկ դեղաչափ 11-12 տարեկանում, հղիության ընթացքում և չափահաս դառնալուց հետո 10 տարին մեկ՝ իրենց անընկալունակությունը (իմունիտետ) բարձրացնելու համար: ԱՓԴԿ պատվաստանյութը պաշտպանում է փայտացումից, դիֆթերիայից և կապույտ հազից: Կապույտ հազը շատ վարակիչ շնչառական հիվանդություն է, որը կարող է տարածվել, երբ մարդը հազում է կամ փռշտում, և կարող է հանգեցնել ծանր հիվանդության:

Մենինգոկոկային պատվաստանյութ

Մենինգոկոկային վարակի դեմ պատվաստանյութը խորհուրդ է տրվում բոլոր դեռահասներին և քոլեջ հաճախող ուսանողներին: Այն պաշտպանում է բակտերիական մենինգիտից, որը շատ լուրջ վարակ է և կարող է հանգեցնել գլխուղեղի վնասվածքի. արյան շրջանառության լուրջ վարակ է՝ օրգանների երկարատև վնասումով կամ մահվան ելքով:

Հավելյալ տեղեկությունների համար այցելեք Հիվանդությունների Վերահսկում և Կանխարգելման Կենտրոնների (CDC)՝ դեռահասների պատվաստումների ժամանակացույցի կայքէջ՝
cdc.gov/vaccines/schedules/easy-to-read/adolescent-easyread.html

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԿԱՐԵՎՈՐ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԸ

- Պատվաստանյութերը սովորեցնում են մեր իմունային համակարգին ճանաչել վնասակար բակտերիաները և վիրուսները և հարձակվել դրանց վրա:
- Պատվաստանյութերը լավագույն գործիքներն են, որոնք մեզ պաշտպանում են այնպիսի հիվանդություններից, ինչպիսիք են պոլիոմիելիտը, կարմրուկը և ջրծաղիկը, որոնք նախկինում հարյուրավոր երեխաների մահվան կամ երկարատև հաշմանդամության պատճառ են դարձել:
- Նախքան օգտագործման թույլտվություն ստանալը պատվաստանյութերը փորձարկվում են՝ համոզվելու համար, որ դրանք անվտանգ են և ապահովում են պաշտպանություն հիվանդություններից: Թույլատրվելուց և լայնորեն հասանելի լինելուց հետո դրանց անվտանգությունը վերահսկվում է մի քանի համակարգերի միջոցով, ներառյալ՝ v-safe-ի, VAERS-ի և Vaccine Safety Datalink-ի:

ԻՆՉՈ՞Ւ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ, ՈՐ ԴԵՌԱՀԱՍՆԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՏՐՎՈՂ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԸ

- Կարևոր է, որ դեռահասները ժամանակին անեն իրենց խորհուրդ տրվող բոլոր պատվաստումները, ներառյալ՝ ՄՊՎ-ի (HPV), մենինգիտի, ԱՓԴԿ-ի (Tdap), գրիպի և COVID-19 դեմ պատվաստումները:
- Հասունացման տարիքում դեռահասները պետք է ուժեղացնեն իրենց անընկալունակությունը (իմունիտետը) որոշ հիվանդությունների նկատմամբ, ինչպիսիք են փայտացումը, դիֆթերիան և կապույտ հազը: Դեռահասությունը նաև կատարյալ ժամանակն է ստանալու համար ցանկացած պատվաստանյութ, որը հնարավոր է, որ դեռահասները բաց են թողել մանկության տարիներին:
- Երբ դեռահասները ժամանակին են անում խորհուրդ տրվող և դպրոցներում պահանջվող բոլոր պատվաստումները, նրանք պաշտպանում են իրենց հիվանդություններից և օգնում են, որ առողջ մնան իրենց ընտանիքները, ընկերները, դասընկերները, ուսուցիչները և դպրոցական համայնքի մյուս անդամները:

Ո՞ՒՐ ԳՆԱԼ ՊԱՏՎԱՍՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- Պայմանավորվեք Ձեր դեռահաս երեխայի մանկաբույժի հետ՝ ժամանակին անելու խորհուրդ տրվող և դպրոցում պահանջվող բոլոր պատվաստումները:
- Եթե Ձեր դեռահաս երեխան չունի հիմնական բժշկական մատակարար, Դուք կարող եք գտնել անվճար և ցածր արժեքով պատվաստումների կլինիկաների ցանկը՝ այցելելով ph.lacounty.gov/vaccines կամ զանգահարելով 1-833-540-0473:
- Եթե վստահ չեք, թե Ձեր դեռահաս երեխային որ պատվաստանյութեր են անհրաժեշտ, զանգահարեք Ձեր երեխայի մանկաբույժին կամ ձեռք բերեք Ձեր երեխայի պատվաստումների թվային գրանցման պատճենը՝ այցելելով myvaccinerecord.cdph.ca.gov/: